

ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 04
Վիճակագրության պետական խորհրդի նիստի

03.03.2006թ.

ժ. 11.00

Մասնակցում էին՝

Ս. Մնացականյան (*խորհրդի նախագահ*), Գ. Անանյան, Վ. Դանիելյան, Հ. Պետրոսյան, Գ. Գևորգյան, Վ. Դավթյան (*խորհրդի անդամներ*), Ա. Աղազարյան (*խորհրդի քարտուղար*)

Հրավիրված էին՝

Լ. Միրզոյան (*ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ*), Վ. Սարոյան (*Իրավաբանական բաժնի պետ*), Գ. Գյուրջյան (*Վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի պետ*), Դ. Մարտիրոսովա (*Տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ*)

Օրակարգի նախագծում` երկու հարց.

1. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից 01.04.2004թ.-31.03.2005թ. իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության արդյունքում ձևավորված անվանագերծված տվյալների բազան Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության Կուրորտաբանության և ֆիզիկական բժշկության գիտահետազոտական ինստիտուտին տրամադրելու թույլտվության մասին»

/Ձեկուցող` Դ. Մարտիրոսովա/

2. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի կողմից` իրականացված 2001-2004թթ. տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության արդյունքում ձևավորված անվանագերծված տվյալների բազաները (ամբողջ ծախսերի մասով, Երևան և այլ մարզեր կտրվածքով) ՀՀ առողջապահության նախարարությանը տրամադրելու թույլտվության մասին»

/Ձեկուցող` Դ. Մարտիրոսովա/

ՀՀ Վիճակագրության պետական խորհրդի նախագահի կողմից ներկայացվեց խորհրդի նիստի օրակարգի նախագիծը, որը հաստատվեց ամբողջությամբ և միաձայն:

/Քվեարկության արդյունքները- կողմ` 6, դեմ` 0, ձեռնպահ` 0/

Լսեցին՝

1. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից 01.04.2004թ.-31.03.2005թ. իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության արդյունքում ձևավորված անվանագերծված տվյալների բազան Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության Կուրորտաբանության և ֆիզիկական բժշկության գիտահետազոտական ինստիտուտին տրամադրելու թույլտվության մասին»

/Ձեկուցող` Դ. Մարտիրոսովա/

Որոշեցին՝

Թույլատրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնին` Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության Կուրորտաբանության և ֆիզիկական բժշկության գիտահետազոտական ինստիտուտին տրամադրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից 01.04.2004թ.-

31.03.2005թ. իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության արդյունքում ձևավորված անվանագերծված տվյալների բազան հետևյալ՝ տրամադրվող անվանագերծված տեղեկատվությունը զուտ գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար օգտագործելու, այլ անձանց չփոխանցելու, չվաճառելու, չհրապարակելու և այլ կարգով չտարածելու պայմաններով:

2. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի կողմից՝ իրականացված 2001-2004թթ. տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության արդյունքում ձևավորված անվանագերծված տվյալների բազաները (ամբողջ ծախսերի մասով, Երևան և այլ մարզեր կտրվածքով) ՀՀ առողջապահության նախարարությանը տրամադրելու թույլտվության մասին»

/Զեկուցող՝ Դ. Մարտիրոսովա/

Որոշեցին՝

Թույլատրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնին՝ ՀՀ առողջապահության նախարարությանը տրամադրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից 2001-2004թթ. տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության արդյունքում ձևավորված անվանագերծված տվյալների բազաները (ամբողջ ծախսերի մասով, Երևան և այլ մարզեր կտրվածքով) հետևյալ՝ տրամադրվող անվանագերծված տեղեկատվությունը զուտ գիտահետազոտական աշխատանքների իրականացման (առողջապահության ազգային հաշիվների կազմման) համար օգտագործելու, այլ անձանց չփոխանցելու, չվաճառելու, չհրապարակելու և այլ կարգով չտարածելու պայմաններով:

/Անհատական/

/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Նախագահ

Ս. Մնացականյան

Քարտուղար

Ա. Աղազարյան